ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (Ղզլար և Մոզդոկ, XVIII դար—XIX դարի առաջին կես)

Լ. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

Հյուսիսային Կովկասում XVIII դարում հիմնադրված Ղզլարի և Մոզդոկի հայկական գաղթավայրերը նշանակալի դեր են կատարել երկրամասի հասարակական-քաղաքական, առևտրատնտեսական և մշակութային կյանքում, հայ-ռուսական և հայ-հյուսիսկովկասյան ժողովուրդների փոխհարաբերություններում։

Հյուսիսային Կովկասի հայկական գաղթավայրերի առևտրատնտեսական կյանքի պատմության առանձին հարցեր քննարկվել են նախասովետական պատմաբանների կողմից։ Սակայն վերջիններս, նպատակ չունենալով ներկայացնել հայ համայնքների առևտրատնտեսական կյանքի պատմությունը, հայ գաղթավայրերին անդրադարձել են այնքանով, որքանով դրանք առնչվել են իրենց անմիջական հարցադրումներին[1]։ Սովետական պատմաբանները զգալի աշխատանք են կատարել Հյուսիսային Կովկասի սոցիալ-տնտեսական կյանքի պատմության ուսումնասիրման գործում, բացահայտել երկրամասում առևտրի, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման քաղաքական և սոցիալ-տնտեսական նախադրյալները, տենդենցներն ու ընդհանուր օրինաչափությունները։ Բնականաբար, նրանք չեն անտեսել երկրամասի առևտրատնտեսական կյանքում որոշակի դեր կատարած հայկական գաղթավայրերի պատմությունը։ Նրանցում նշվել է հատկապես հայերի մասնակցությունը գյուղատնտեսական մի շարք կուլտուրաների ներմուծմանն ու մշակմանը, արհեստագործության և հատկապես առևտրի ծավալմանն ու զարգացմանը[2]։ Սակայն հարցադրումների մեծ մասը ընդհանուր բնույթի են և թերի։ Անշուշտ, մեծ չափով զգացնել է տվել արխիվային նյութերի օգտագործման պակասը։

Ներկա հոդվածում կփորձենք լուսաբանել քաղաքական և սոցիալ-տնտեսական այն նախադրյալները, որոնք պայմանավորեցին երկրամասի առևտրատնտեսական կյանքում հայերի ներգրավումը, նրանց դերը տնտեսության մի շարք ճյուղերի զարգացման և առևտրի ծավալման գործում։

XVIII դարի 20-ական թթ.՝ կովկասյան քաղաքականության ակտիվացման շրջանում, Ռուսաստանը մեծ ուշադրություն էր դարձնում Մերձկասպյան

---

[1] И. В. Равинский. Хозяйственное описание Астраханской и Кавказской губерний... СПб., 1809; П. Зубов. Картина Кавказского края, принадлежащего России и сопредельных оному земель... СПб., ч. II, 1835; П. Г. Бутков. Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 гг. Ч. 1—3, СПб., 1869; А. Павлов. О азиатских народах обитающих в южной России. СПб., 1841.

[2] А. В. Фадеев. Очерки экономического развития Степного Предкавказья в дореформенный период. М., 1957; Н. П. Гриценко. Социально-экономическое развитие притеречных районов в XVIII—первой половине XIX в.—Труды Чечено-Ингушского НИИ. Т. IV, Грозный, 1961; С. А. Чекменев. Социально-экономическое развитие Ставрополья и Кубани в конце XVIII и в первой половине XIX в. Пятигорск, 1967; Н. Г. Волкова. О расселении армян на Северном Кавказе до начала XXв.—*«Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 3։* В. Л. Айрапетян. Из истории поселения армян на Северном Кавказе и их торгово-экономической деятельности.—*«Բանբեր Հայաստանի արխիվների», 1974, № 1։*

շրջանը և Թերեքի ավազանի նոր գրաված շրջանները տնտեսական որոշակի պոտենցիալ ներկայացնող քրիստոնյա բնակչությամբ բնակեցնելուն։ Քրիստոնյա բնակչության թվի ավելացումը ի հակակշիռ մահմեդականների և տեղում սոցիալ-քաղաքական ամուր հենարանի ստեղծումը, քաղաքական նպատակներից բացի, կարևոր էր նաև առաջնահերթ այնպիսի հարցերի լուծման համար, ինչպիսիք էին՝ բանակը սննդամթերքով ապահովելը, երկրամասի ամայի և անմշակ հողերի արագ և ինտենսիվ յուրացումը, առևտրի աշխուժացումը, կովկասյան տեղաբնիկների ներգրավումը տնտեսական կյանքի և ռուսական առևտրի ոլորտը և այլն։ Պատահական չէր, որ Պետրոս I-ի և նրա խորհրդականների ընտրությունը առաջին հերթին կանգ առավ հայերի վրա, որոնք իրենց առևտրատնտեսական գործունեությամբ վաղուց հայտնի էին ոչ միայն Կովկասում, այլև Ռուսաստանում և նրա սահմաններից դուրս։ XVIII դարի 20-ական թթ. կեսերից, Պետրոս I-ի նպաստավոր հրավերներով, ինչպես նաև օտար լծից ազատվելու և Ռուսաստանի հովանու տակ խաղաղ գոյավիճակ ապահովելու նպատակով, հայերի առանձին հատվածներ, թողնելով մայր հայրենիքը և իրենց վաղեմի բնակավայրերը, գաղթում են Մերձկասպյան շրջանի և Թերեքի ավազանի ռուսական սահմանները։ Նրանք հայկական ոչ մեծ գաղթավայրեր են հիմնադրում Դերբենդում, Սուրբ Խաչում, իսկ ավելի ուշ՝ Ղզլարում, Մոզդոկում և այլուր։ Օգտվելով շնորհված մի շարք արտոնություններից, նորաբնակները արագորեն ընդգրկվում են երկրամասի առևտրատնտեսական կյանքի ոլորտը։ XVIII դարի 20—30-ական թթ. վավերագրերում բազմիցս հիշատակվում են Մերձկասպյան շրջանում հաստատված հայ վաճառականներ, որոնք, չնայած երկրամասում տիրող ռազմական իրադրությանը, աշխույժ առևտրական կապեր էին հաստատել ռուսական մի շարք քաղաքների հետ[3]։ Աղբյուրներում քիչ չեն հիշատակությունները նաև հայ երկրագործների և արհեստավորների մասին, որոնք զգալի թիվ էին կազմում Մերձկասպյան շրջանի ռուսական նորաստեղծ քաղաք-ամրոցներում[4]։ Ռուսական կառավարող շրջանները, նորաբնակներին որոշակի արտոնություններ շնորհելով, հետապնդում էին մեկ այլ նպատակ ևս, այն է՝ շահագրգռել և խթանել Անդրկովկասից, Իրանի ու Թուրքիայի հայաշատ շրջաններից նորանոր հայերի վերաբնակեցումը Ռուսաստան։

XVIII դարի պաշտոնական վավերագրերում հաճախ է շեշտվում այն միտքը, որ հայերից շատերը, տեսնելով հայրենակիցների ապահով և արտոնյալ վիճակը, կձգտեն բնակություն հաստատել Ռուսաստանում[5]։ Հայերին սիրաշահելու և հովանավորելու՝ պետության քաղաքական և տնտեսական շահախնդրություններով պայմանավորված քաղաքականությունը ժառանգեցին նաև Պետրոս I-ի հաջորդները։ Ռուսաստանի կողմից Հյուսիսային Կովկասի վերջնական գրավման և միավորման կարևոր նախադրյալներից էր երկրամասի տնտեսության արագ և ինտենսիվ յուրացումը, որն իր հերթին պայմանավորված էր բնակչության թվի ավելացումով, նոր քաղաքների և գյուղերի հիմնադրմամբ, առևտրի զարգացումով, երկրամասը և տեղաբնիկներին համառուսական շուկայի մեջ ներգրավելով և այլն։ XVIII դարի 30-ական թթ. սկսած երկրամասի բնակեցման գործում, կողակության և դրսեկ ռուս գյուղացիության հետ մեկտեղ, ոչ պակաս կարևոր դեր խաղացին նաև հայ գաղթականները։ Շնորհված արտոնությունների հիման վրա և նրանց շրջանակներում հայերը համահավաք հայկական գաղթօջախներ հիմնեցին Ղզլարում, նրա շրջակա գյուղերում, իսկ ավելի ուշ՝ Մոզդոկում և երկրամասի այլ քաղաքներում

---

[3] Архив внешней политики России (АВПР), ф. СРА, оп. 100/I, д. 3, 1736—1737 гг., лл. 1—2 об.

[4] Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века. Сборник документов. Т. III. Ереван, 1978, док. 36, 38.

[5] Полное собрание законов Российской империи (ПСЗРИ), т. X, № 7614, с. 564; АВПР, ф. СПб. Главный архив, II—25, 1763, д. 1, лл. 8.

ու գյուղերում։ Հայերի կենտրոնացումը ռազմաքաղաքական և տնտեսական կարևոր նշանակություն ունեցող ռուսական բնակավայրերում, մեծ չափով կանխորոշում էր նաև նրանց տնտեսական կյանքի զարգացման հնարավորությունները ու պայմանները։ Հայ գաղթականները, ի տարբերություն զինվորական ծառայությամբ ծանրաբեռնված կոզակության և ներգաղթող ռուս և ուկրաինացի ընչազուրկ գյուղացիության, ազատված էին զինվորական ծառայությունից և պետական զանազան հարկերի վճարումից։ Այս հանգամանքը ևս վերջիններիս արտադրատնտեսական ծավալուն գործունեության ռեալ հնարավորություն էր ընձեռում։

Դրսեկ ռուս բնակչության համեմատ հայերը ավելի արագ էին ընտելանում Երկրամասի բնակլիմայական պայմաններին։ Այսպես՝ չնայած Ղզլարի վստահողջ կլիմայական պայմաններին, հայերը ոչ միայն մնայուն գաղթօջախ հիմնեցին տեղում, այլև տարիներ շարունակ համառ աշխատանքներ էին տանում Ղզլարի շրջակա ճահիճները չորացնելու և դրանց տեղում պտղատու այգիներ հիմնելու ուղղությամբ։ Պաշտոնական վավերագրերի համաձայն, XVIII դարի 90-ական թթ. Թերեքի ավազանում բնակություն էին հաստատել հինգ հազարից ավելի հայեր, որոնց հիմնական մասը կենտրոնացված էր Ղզլարում և Մոզդոկում[6]։ Արևելյան Կովկասում հայկական գաղթավայրերի սկզբնավորման վաղ շրջանի համար այդքան ստվար քանակությամբ հայերի կենտրոնացումը աննշան համարվել չէր կարող, եթե նկատի ունենանք ռազմական իրադրության պայմաններում երկրամասի բնակեցման դժվարությունները ու դանդաղ տեմպերը։ Ավելին, հիմնադրման առաջին իսկ օրից ընդգրկվելով գյուղատնտեսության առավել ապրանքային ճյուղերի, տեղական արդյունագործության և առևտրի զարգացման ու ծավալման ոլորտը, հայերը նշանակալից դեր խաղացին և զգալի տեսակարար կշիռ ձեռք բերեցին երկրամասի առևտրատնտեսական կյանքում։ Այսպիսով, կառավարության հովանավորող քաղաքականությունը, ազատ և ընդարձակ հողերի առկայությունը, բնակլիմայական նպաստավոր պայմանները լայն հնարավորություններ ընձեռեցին հայ նորաբնակներին՝ զբաղվելու անմշակ հողերի յուրացմամբ։ Հայրենիքում ձեռք բերած տարիների փորձն ու հմտությունը նրանք սկսեցին ներդնել գյուղատնտեսական տարբեր կուլտուրաների մշակության գործում։

XVIII դարում և XIX դարի կեսերին երկրամասի տնտեսական կյանքին տոն տվողները Ղզլարն ու Մոզդոկն էին, որոնք ռազմավարչական միավորներ լինելուց բացի, բնակչության կենտրոնացման, առևտրի, գյուղատնտեսական և արհեստավորական արտադրանքի պահեստային կենտրոններ էին։ Ղզլարում վերաբնակեցման առաջին տարիներից, բնակչությանը սննդամթերքով ապահովելու նպատակով և որպես ապրուստի հիմնական աղբյուր առաջնահերթ նշանակություն է տրվել երկրագործությանը։ Ազատ և անմշակ հողերի առկայությունը Ղզլարի շրջակայքում և դրանք անվճար ձեռք բերելու արտոնությունը՝ հայ նորաբնակներին հնարավորություն էր տալիս զբաղվելու գյուղատնտեսական տարբեր կուլտուրաների մշակությամբ։ Բազմաթիվ վավերագրերով հավաստվում է ժամանակի համար բնորոշ այն իրողությունը, որ քաղաքային բնակչության մեծ մասը, այդ թվում՝ ազնվականները, զինծառայողները, առևտրականները հավասարապես զբաղվել են առևտրով, երկրագործությամբ, այգեգործությամբ, մետաքսամշակությամբ։ Ղզլարահայ Ի. Գրիգորևը 1757 թ. խնդրագրերից մեկում նշում է, որ տարիներ առաջ, շատերի հետ Սուրբ Խաչից փոխադրվել է Ղզլար, ընտանիքով ապրում է սեփական տանը, ունի կրպակներ, որոնցում առևտուր է անում իրանական և ռուսական տարբեր ապրանքներով, ինչպես նաև ունի այգի և վարելահող[8]։ Նույն թվականին, ղզլար-

---

6 Центральный государственный исторический архив в Ленинграде (ЦГИА СССР). ф. 1374, оп. 2, д. 1815, л. 89.

7 ПСЗРИ, т. XIII, № 9714, с. 139—200.

8 Центральный государственный архив Дагестанской АССР (ЦГА ДАССР), ф. 379, оп. 1, д. 390, л. 27.

ցի հայ զինվորական Գ. Խսախանովը Ղզլարի պարետ Ֆրաուենդորֆին հասցեագրած խնդրագրում հայտնում է, որ «Ղզլարում ընտանիքով բնակություն հաստատելու առաջին իսկ օրից, մյուս հայերի նման ձեռք է բերել բանջարանոց և խոտհարքի հողեր։ Ընտանիքի կարիքները հոգալու նպատակով խնդրում է իրեն հատկացնել նաև փոխգնդապետ Թ. Ղուզանովի բանջարանոցին կից ազատ հողամասը թթենի աճեցնելու համար»։

Երկրագործությամբ և այգեգործությամբ զբաղվելու նպատակով հողեր են հատկացվել նաև Մոզդոկում հաստատված հայերին։ Մոզդոկի հայերի և վրացիների 1767 թ. Ղզլարի պարետին հասցեագրած խնդրագրից տեղեկանում ենք, որ հիմնադրման առաջին տարում նրանց հատկացվել են հողեր, որտեղ նրանք զբաղվել են հացահատիկի մշակությամբ, տնկել թթենիներ և խաղողի վազեր[10]։

Հայ համայնքի կողմից Մոզդոկի շրջակա հողերի մասսայական և ինտենսիվ յուրացման մասին է խոսում այն փաստը, որը 1772 թ. գարնանը, հայ բնակչության անունից Ե. Պապինը և Ն. Մանուչարովը Մոզդոկի պարետ Ֆ. Իվանովին ուղղված հայտարարության մեջ գրում են իրենց լրացուցիչ հողեր հատկացնելու մասին, քանի որ եղածը չի բավարարում հացահատիկային կուլտուրաների մշակությամբ զբաղվելու համար[11]։

XVIII դարի վավերագրերից մեկի համաձայն ղզլարցիները կերակրվում էին Ղզլարի շրջակայքում աճեցվող հացահատիկով[12]։ Սակայն սահմանների բացակայությունը Թերեքի մերձափնյա շրջաններում և ցածրադիր հողերի ու ճահճուտների առկայությունը (հատկապես Ղզլարի շրջանում) զգալի չափով սահմանափակում էին հացահատիկային կուլտուրաների մշակության հնարավորությունը։ Ղզլարի շրջակայքում աճեցվող հացահատիկը հազիվ է բավարարել տեղի բնակչության պահանջները, ուստի և որոշ քանակությամբ հացահատիկ ներմուծվել է Մոզդոկի շրջանից, իսկ հաճարացորեն՝ Աստրախանից[13]։ Հացահատիկի պակասը Ղզլարի շրջանում լրացվել է սորոչինյան հացահատիկի (բրինձ) ցանքսերի ավելացմամբ, որի հիմնական ներմուծողներն ու մշակողները Անդրկովկասից գաղթած հայ գյուղացիներն էին։ Շնորհիվ Ղզլարի շրջանի բնակլիմայական նպաստավոր պայմանների և հայ երկրագործների նախաձեռնության, փորձի և հմտության, բրնձի մշակությունը լայն տարածում է ստանում, իսկ մշակման տեխնիկան շուտով յուրացվում նաև կովկասյան տեղաբնիկների և ռուս վերաբնակների կողմից։ Ակադեմիկոս Գիլդենշտեդը չեչենների երկրագործության մասին խոսելիս նշել է, որ նրանք զբաղվել են նաև սորոչինյան հացահատիկի մշակությամբ, որը, ամենայն հավանականությամբ, վերցրել էին հայերից[14]։ 1835 թ. պաշտոնական տեղեկագրի համաձայն Ղզլարի շրջանում բրնձի մշակությամբ զբաղվում էին 53 ղզլարցիներ, որոնց մեծամասնությունը (ըստ ներկայացված անվանական ցուցակի՝ 98 տոկոսը) հայեր էին, այդ թվում՝ ազնվականներ Ատ. Արեշևը, Օ. Ագլինցևը, Ն. Սերեբրյակովը, Ն. Խոջաևը, Ս. Միշվելևը, Օ. Փառակեցովը, Պ. Մելքումովը, զինվորական Ա. Կաչկաչևը և ուրիշներ[15]։ Նույն տեղեկագրի տվյալներով, 1835 թ. Ղզլարի շրջանում հավաքվել է 40415 փութ բրինձ։ XVIII դարի վերջերից Ղզլարի շրջանից ստաց-

---

9 Նույն տեղում, ֆ. 379, ց. 2, գ. 49, թ. 74։

10 АВПР, ф. Кизлярские и Моздокские дела, д. 1, л. 139 об.

11 Центральный государственный исторический архив Грузинской ССР (ЦГИА ГрузССР), ф. 1007, оп. 1, д. 3, лл. 161—162 об.

12 Центральный государственный военно-исторический архив СССР (ЦГВИА СССР), ф. ВУА, д. 18570, ч. I, л. 84 об.

13 Նույն տեղում։

14 С. А. Чекменев. Социально-экономическое развитие Ставрополья и Кубани в конце XVIII и в первой половине XIX века. Пятигорск, 1967, с. 150.

15 ЦГА ДАССР, ф. 362, оп. 1, д. 46, л. 6.

վող բրնձի առատ բերքը ապահովել է ոչ միայն տեղական պահանջները, այլև մեծ քանակությամբ արտահանվել Ռուսաստան։

Հրոշակի էր հայերի և վրացիների ներդրումը երկրամասում այգեգործության, բանջարաբոստանային կուլտուրաների մշակության գործում։ XVIII դարի 80-ական թթ. կեսերին Ղզլարի շրջակա այգիներում նրանք աճեցնում էին հիմնականում խաղող, ինչպես նաև խնձորենի, ծիրանենի, սալորենի, տանձենի, բալենի, թթենի։ Բանջարանոցներում և բոստաններում մշակում էին համեմունք, սեխ, ձմերուկ և այլն, որոնց մի մասը սպառվում էր տեղում, մեծ մասը առաքվում Աստրախան՝ վաճառքի[16]։ Մոզդոկում, դարի վերջերին, քաղաքամերձ 15 նորատունկ այգիներից բացի, զգալի թիվ էին կազմում տնամերձ այգիներն ու բանջարանոցները, որոնց արտադրանքը՝ միրգ, վարունգ, սեխ, բակլա և այլն, հիմնականում սպառվում էր տեղում[17]։

XVIII դարի կեսերից ղզլարահայերը զբաղվում էին նաև քունջութի, բամբակի, տորոնի, իսկ ավելի ուշ նաև դեղնաներկի և կապառի մշակությամբ, որոնք եկամտաբեր էին և լայն պահանջարկ ունեին ռուսական շուկաներում։ Ղզլարի շրջանում աճեցվող տորոնը, որը բարձր էր գնահատվում Ռուսաստանում և նրա սահմաններից դուրս, Ղզլարի առևտրականները (այդ թվում և հայերը) փոխադրում էին Աստրախան, իսկ այնտեղից էլ՝ կայսրության տարբեր քաղաքներ։ XIX դարի 30-ական թթ. կեսերին Ղզլարի շրջանում տորոնի մշակությամբ և արտահանումով զբաղվում էին ընդամենը երկու Ղզլարցի, այդ թվում 2-րդ գիլդիայի վաճառական Բայենդուրովը։ 1836 թ. արտադրված 120 փութ տորոնից 70 փութը պատկանում էր վերջինիս[18]։

XIX դարի սկզբներին Ղզլարի շրջանում լայն տարածում էր ստացել նաև դեղնաներկի և կապառի մշակությունը, որոնց հիմնական արտադրողներն ու արտահանողները հայ կալվածատերերն ու վաճառականներն էին։ Պաշտոնական տվյալներով 1835 թ. Ղզլարի շրջանում արտադրվել է 7670 փութ դեղնաներկ և 970 փութ կապառ։ Այն հիմնականում վաճառքի է հանվել[19]։

Արևելյան Կովկասում առաջինը հայերը նախաձեռնեցին շաքարեղեգնի աճեցումը։ 1835 թ. ղզլարահայ Ե. Մանվելովը Լենքորանից Ղզլար փոխադրեց և աճեցրեց շաքարեղեգի արմատներ[20]։

Խաղողագործությամբ և գինեգործությամբ զբաղվում էին նախակովկասում վաղուց բնակություն հաստատած կոզակները։ Սակայն տնտեսության այդ ճյուղերը երկրամասում լայն տարածում են ստանում հատկապես XVIII դարի կեսերից՝ հայերի և վրացիների վերաբնակեցումից հետո։ Թերեքի ավազան գաղթած հայերը իրենց հետ Անդրկովկասից, Կովկասյան լեռներից, Դերբենդից, Իրանի կովկասյան տիրույթներից բերեցին խաղողի նոր տեսակի վազեր և սկսեցին դրանց մշակումը։ Շուտով, շնորհիվ կառավարության հովանավորող քաղաքականության և հայ երկրագործների նախաձեռնության, Ղզլարի անշավիղ ճահճուտները վերածվում են խաղողի և այլ պտղատու այգիների։ 1785 թ. տվյալներով Ղզլարի շրջակայքում հաշվում էին 567 (հիմնականում խաղողի) այգիներ[21]։ Ղզլարահայերի հիմնական եկամտի աղբյուրը խաղողի սեփական այգիներից ստացվող ցածրորակ և էժան, բայց միաժամանակ մեծ քանակությամբ արտադրվող կարմիր գինին էր (չիխիր), որը մասամբ սպառվում էր տեղում, իսկ հիմնականում փոխադրվում Աստրախան՝ վաճառքի։ Աստրախանի նահանգային գրասենյակ ուղարկված տեղեկագրերից մեկում նշվում է, որ

---

16 ЦГВИА СССР, ф. ВУА, д. 18570, л. 85.

17 Նույն տեղում։

18 ЦГА ДАССР, ф. 362, оп. 1, д. 46, л. 3.

19 Նույն տեղում, թ. 4, 5։

20 П. Заблоцкий. Путевые записки из Астрахани, через Кизляр в Баку, в 1835 и 1836 гг.—ЖМВД, ч. 29, СПб., 1838, с. 15.

21 ЦГВИА СССР, ф. ВУА, д. 18570, л. 85.

1752 թ. Ղզլարում արտադրվել է 3012 դույլ գինի և վաճառվել 2108 ռուբլով[22]։ XVIII դարի կեսերին Ղզլարի գինու վաճառքը Աստրախանում այնպիսի չափերի է հասնում, որ իշխանությունները, պետական գինու վաճառքից ստացվող եկամուտներից չզրկվելու նպատակով, միջոցներ են ձեռնարկում Ղզլարից Աստրախան առաքվող գինու վաճառքը սահմանափակելու ուղղությամբ, ընդհուպ մինչև արգելումը[23]։ Ղզլարի պարետ Ստուպիշինը 1762 թ. դեկտեմբերին Արտաքին գործերի պետական կոլեգիա ներկայացրած զեկուցագրում հայտնում է, որ ղզլարահայերը կայսրուհուն խնդրագիր են ներկայացրել Ղզլարից առաքվող գինու մասնավոր վաճառքը Աստրախանում արգելող Աստրախանի այգեգործական գրասենյակի 1759 թ. օգոստոսի 19-ի հրամանի առիթով։ Դրա հետևանքով, հայտնում է Ստուպիշինը, հայերը նյութական ծանր կացության մեջ են ընկել։ Ղզլարի պարետը հիմնավոր համարելով Աստրախանում նախկին գներով գինու մասնավոր և ազատ առևտուր անելու հայերի խնդրանքը, միաժամանակ նշում է, որ այն կնպաստի ոչ միայն ղզլարահայերի տնտեսական դրության բարելավմանը, այլև խթան կհանդիսանա նորանոր գաղթականների բնակեցմանը Ղզլարում[24]։

Արտաքին գործերի պետական կոլեգիայի առաջարկության, իսկ ավելի ուշ Աստրախանի նահանգապետ Բեկետովի զեկուցագրի հիման վրա, Սենատը 1767 թ. սեպտեմբերին հրամայում է՝ թույլատրել Ղզլարի բնակիչներին, ինչպես նաև կոզակներին, Աստրախանում գինին վաճառքի հանել ոչ թե դույլերով, այլ տակառներով, որպեսզի մանրածախ առևտուրը չվնասի պետական գինու վաճառքին[25]։ Պետության կողմից արվող նման սահմանափակումները և տերության գանձարանը անուղղակի հարկերով հարստացնելու տենդենցները բնորոշ էին նախառեֆորմյան ֆեոդալական Ռուսաստանի առևտրական քաղաքականությանը։ Միաժամանակ օրակարգում դրված էր հարավային Ռուսաստանի՝ այգեգործության և գինեգործության զարգացման տեսակետից առավել նպաստավոր և հեռանկարային համարվող Ղզլարի և Մոզդոկի շրջանների տնտեսական յուրացման խնդիրը։ Այդ նպատակով կառավարող շրջանները, խրախուսելով հայ վերաբնակիչների նախաձեռնությունը, փորձում էին համապատասխան միջոցառումներով նպաստել վերջիններիս տնտեսական գործունեությանը։ XVIII դարի վերջերին Ղզլարի շրջան գաղթած դերբենգցի հայերը 1804 թ., ջրհեղեղի հետևանքով զրկվում են իրենց նորատունկ այգիներից։ Նորաբնակների տնտեսական վիճակը բարելավելու նպատակով պետությունը 10 տարով 80 հազար ռուբլի անտոկոս վարկ է տրամադրում նրանց[26]։ Դարասկզբին, նույն քանակությամբ վարկ է հատկացվում նաև ղզլարցի այգետերերին՝ ցրտահարված այգիները վերականգնելու համար[27]։ Խաղողի գինու և օղու վաճառքի մաքսային սահմանափակումների վերացումը (1780 թ. և 1803 թ.), 1807 թ. Ղզլարում գինեգործական ուսումնարանի հիմնադրումը և այլ միջոցառումներ նպաստեցին երկրամասում այգեգործության, գինեգործության և գյուղատնտեսական մյուս ճյուղերի հետագա զարգացմանը[28]։

Ղզլարահայերը 1829 թ. հունիսին Ի. Պասկևիչին հղած խնդրագրում նշում են, որ կառավարության հովանավորող քաղաքականության շնորհիվ փոքրաթիվ բնակչություն ունեցող Ղզլարի շրջանը ներկայումս արտադրում է այնպիսի քանակությամբ գինի, մետաքս և բրինձ, որի հետ չեն կարող մրցել կլի-

---

22 ЦГА ДАССР, ф. 379, оп. 1, д. 272, л. 13.

23 С. А. Чекменев. Указ. соч., с. 185.

24 АВПР, ф. СПб. Главный архив, II—25, 1763, д. 1. л. 1—13 об.

25 ПСЗРИ, т. XVIII, с. 343—344.

26 ГПБ нм. Салтыкова-Щедрина, ОР и РК, ОСРК, рукопись Г. Мадейского напис. в 1844 г.

27 О разноверцах, покоренных Россиею и добровольно поселившихся в ней народах. Митава, 1838, с. 21.

28 П. Кеппен. О виноделии и винной торговле в России. СПб, 1832, с. 95.

ական և հողային լավագույն պայմաններ ունեցող ոչ միայն հարավային Ռուսաստանի, այլև անդրկովկասյան նահանգները[29]։

Բարեկարգ ճանապարհների բացակայության պատճառով Ղզլարի այգիներից ստացվող և տակառներում պահվող խաղողի դինին առանց նշանակալի կորուստների անհնար էր փոխադրել ռուսական հեռավոր քաղաքները։ Այդ պատճառով XVIII դարի վերջերից ղզլարահայերի մի մասը սկսում է խաղողի գինուց սպիրտ պատրաստել, որից էլ օգի էին թորում։ XVIII դարի 90-ական թթ. Ղզլարում հիմնվում են հայ այգետերերին և վաճառականներին պատկանող օղեթորման մասնավոր գործարաններ, որոնք 2—3 պղնձե կաթսաներով տնայնագործական տիպի և ցքահանության նահապետական սկզբունքներով գործող ոչ մեծ ձեռնարկություններ էին։ Գործարաններում, որպես կանոն, աշխատում էին 1—2 հայ վարպետ և 5—6 բանվոր[30]։

Օղու արտադրությունը ծավալելու և ղզլարցիներին խրախուսելու նպատակով 1803 թ. հուլիսի 19-ին հետևում է բարձրագույն հրամանը, որի համաձայն թույլատրվում էր խաղողի օղին Մոսկվա փոխադրել առանց մաքս վճարելու[31]։

Պաշտոնական տեղեկագրի համաձայն 1828 թ. Ղզլարի շրջանի (ներառյալ Ղզլարը) 123 օղեթորման գործարաններում (որից 10-ը կոզակային ստանիցաներում) արտադրվել է 206025 դույլ օղի։ Տեղեկագրի համաձայն առավել խոշոր ձեռնարկությունները պատկանում էին հայ կալվածատերեր Վ. Քայանթարովին, Կ. Խոջաևին, Օ. Թավաքալովին, Խաստատովին, քաղաքացիներ Ստ. Ավագովին, Ն. Բուրջալովին, Ի. Փառակեցովին և ուրիշների։

Ղզլարահայ և մոզդոկահայ այգետերերի և վաճառականների մի մասը օղեթորման գործարաններ էին հիմնել նաև Կովկասյան մարզի կոզակային ստանիցաներում[32]։

Օղեգործության ծավալմանը զուգընթաց գինեգործությունը Ղզլարում շարունակվել է նաև հետագա տարիներին և հանդիսացել մանր ու միջին այգետերերի գոյության հիմնական աղբյուրը։

XIX դարի կեսերին օղու համար սահմանված հարկերի ավելացման, Թերեք գետի մշտական հեղեղումների, հաճախակի ցրտահարությունների և այլ պատճառներով Ղզլարի շրջանում զգալիորեն կրճատվում են խաղողի այգիները, որի հետևանքով խաղողագործությունը և գինեգործությունը նկատելի անկում են ապրում։ Փոխարենը, տնտեսության այս ճյուղերը սկսում են դարգանալ Մոզդոկի, Պյատիգորսկի և կոզակային զորքերի շրջաններում։ Հարկ է նշել, որ այս բոլորով հանդերձ, Ղզլարն իր շրջանով XIX դարի կեսերին խաղողի բերքի և նրանից ստացվող գինու և օղու արտադրությամբ երկրամասում առաջնությունը պահում էր իր ձեռքում։

XVIII դարի սկզբներից ռուսական կառավարող շրջաններում մեծ ուշադրություն էր դարձվում հարավային երկրամասում, մասնավորապես Թերեքի ավազանում (ուր կլիմայական նպաստավոր պայմաններ կային թթենիների աճեցման համար), շերամապահության և մետաքսամշակության զարգացմանը։ Հայրենական մետաքսագործություն ստեղծելու նպատակով խրախուսվում էր նաև այդ կուլտուրայի մշակությանը լավ ծանոթ հայերի և վրացիների բնակեցումը Արևելյան Կովկասում։ Դեռևս 1718 թ. Թերեքի ափին, Ղզլարի մոտ, հոդեր են տրամադրվում հայազգի Սաֆար Վասիլևին թթենիների աճեցման և մետաքսի մշակության համար։ Տարբեր արտոնությունների շնորհումը նրան նպատակ ուներ շահագրգռել և նորանոր վարպետ մետաքսագործներ հրավիրել Իրանի հայաշատ շրջաններից[33]։ Ս. Վասիլևի սկսած և ժամանակավորա-

---

29 ЦГИА ГрузССР, ф. 2, оп. 1, д. 2495. л. 2 об.

30 ЦГА ДАССР, ф. 362, оп. 1, д. 56, лл. 5—8.

31 ЦГИА ГрузССР, ф. 2. оп. 1, д. 2495, л. 2.

32 ЦГА ДАССР, ф. 362, оп. 1, д. 44, л. 17, 24.

33 Армяно-русские отношения в первой трети XVIII в. (сборник документов), т. 2, ч. 1, Ереван, 1964, док. 23.

պես ընդհատված գործը դարի 40-ական թթ. շարունակեցին Վ. Մակարովը, ապա Լ. Շիրվանովը։ Ստանալով կայսերական թույլտվությունը և արտոնագիր, նրանք ձեռնամուխ եղան մետաքսի մշակության բավական բարդ և աշխատատար գործին[34]։ Ղզլարի շրջակա թթենու առատ ծառատունկերը լայն հնարավորություններ ընձեռեցին երկրամասում մետաքսի մշակությունը արմատավորելու և զարգացնելու համար։ Դարի կեսերին Թերեքի ավազանում իրանահայ առանձին հատվածների շարունակվող վերաբնակեցումը զգալիորեն նպաստեց մետաքսամշակության ծավալմանը։ Այսպես, 1753 թ. Վ. Մակարովին են դիմում ուզումեցի, մարաղացի և Թավրիզի շրջակա գյուղերի մի խումբ իրանահայեր՝ Ղզլար փոխադրվելու և տեղի մետաքսամշակման գործարանում աշխատելու խնդրանքով։ Իրանահայերը պայմանագիր են կնքել Մակարովի հետ, ըստ որի նա իր հաշվին նրանց պետք է տեղափոխեր Ղզլար և պայմաններ ստեղծեր մետաքսի, բրնձի, բամբակի, տորոնի մշակությամբ զբաղվելու համար։ Դրա փոխարեն վերաբնակյալները պարտավորվել են արդյունքի մի մասը ձեռնարկատիրոջը հանձնելուց հետո միայն մնացածը վաճառել[35]։ XVIII դարի 50-ական թթ. վերջերին մոսկվացի հայ վաճառական Մ. Խաստատովը գնում է Սարաֆանովո գյուղում (հետագայում Շելկովայա ստանիցա) Ս. Վասիլևի հետնորդների հիմնած մետաքսամշակման գործարանը։ 1765 թ. տվյալներով՝ գործարանին կից բնակություն էին հաստատել 83 հայ, 78 վրացի, 71 չերքեզ և կումիկ[36]։ Տարբեր աղբյուրների վկայություններով Սարաֆանովոյի բնակությունը մետաքսամշակությունից բացի (1772 թ. արտադրվել է 8 փութ մետաքս)[37], զբաղվել է նաև այգեգործությամբ, բրնձի և բամբակի մշակությամբ։ Տեղի բնակչության առաջնահերթ պահանջարկը բավարարելուց հետո, արտադրանքի որոշ մասը (այդ թվում՝ տեղական չոր մրգեր և ձուկ) արտահանվել է Մոսկվա և կենտրոնական այլ քաղաքներ[38]։

XVIII դարի կեսերից մինչև XIX դարի կեսերը Թերեքի ավազանի մետաքսամշակության հիմնական կենտրոնը Ղզլարն էր, որտեղ 1785 թ. գործել են հայերին պատկանող երեք մետաքսամշակման գործարան։ Վավերագրի վկայությամբ, արտոնություններից օգտվող հայ ձեռնարկատերերը օգտագործել են բացառապես տեղական հումքը, իսկ ստացված մետաքսը վաճառել Ղզլարում։ Առաջին երկու գործարաններից յուրաքանչյուրում աշխատել է հինգ, իսկ երրորդում՝ չորս ընտանիք։ Անհրաժեշտության դեպքում թույլատրվել է լրացուցիչ աշխատողներ վարձել Ղզլարի կամ հարևան գյուղերի ազատ գյուղացիներից[39]։ Շերամապահությամբ և մետաքսի մշակությամբ զբաղվել են Ղզլարի հայ բնակիչներից շատերը, որոնք XVIII դարի կեսերից խնդրագրերով լրացուցիչ հողամասեր էին ձեռք բերել թթենիների աճեցման համար[40]։ Պաշտոնական տվյալների համաձայն, 1799 թ. Ռուսաստանում մշակված 190 փութ մետաքսից 123 փութը բաժին էր ընկնում Թերեքի մետաքսագործներին[41]։

XIX դարի 30-ական թթ. հայերը Ղզլարի շրջակայքում աճեցրել էին 500 000 թթենի, ուր տարեկան մինչև 75 փութ մետաքս էին արտադրում[42]։ Մեկ տասնամյակ անց Ղզլարում հաշվվում էին 24 առավել խոշոր հայ մե-

---

34 ПСЗРИ, т. XI, № 8242, с. 259—262; № 8449, с. 512.

35 Մաշտոցի անվ. Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավ. 28։

36 ЦГА ДАССР, ф. 379, оп. 1, д. 610, л. 14.

37 И. А. Гильденштедт. Географическое и статистическое описание Грузии и Кавказа из путешествия г-на академика И. А. Гильденштедта через Россию и по Кавказским горам в 1770, 71, 72, и 73 годах. СПб., 1809, с. 25.

38 ЦГА ДАССР, ф. 379, оп. 1, д. 881, лл. 18, 22—23.

39 ЦГВИА СССР, ф. ВУА, д. 18570, л. 84 об.

40 ЦГА ДАССР, ф. 379, оп. 2, д. 49, лл. 6, 60, 73.

41 ПСЗРИ, т. XXVI, № 19290.

42 ЦГИА ГрузССР, ф. 2, оп. 1, д. 2495, л. 38 об. Собрание актов.., т. II, с. 105.

տաքսամշակողներ, որոնցից 11-ը կալվածատերեր էին, իսկ մյուսները ունեվոր քաղաքացիներ և վաճառականներ (Արեշև, Սերեբրյակով, Ագլինցև, Թարումով, Շերգիլով, Միշվելև, Բուրջալով, Պետրոսով և ուրիշներ)[43]։ XIX դարի 30-ական թթ. վերջի վավերագրերից մեկում հայ ազնվականներ Գ. Շերգիլովը, Ա. Միշվելևը և ղզլարահայ Պ. Տանգովը համապատասխանաբար հիշատակվում են որպես կովկասյան մարզի մետաքսագործության տեսուչ, գործավար և հաշվագիր, որոնք միևնույն ժամանակ թթենու այգիներ են ունեցել Ղզլարում և զբաղվել մետաքսամշակությամբ։ Նույն վավերագրում նշվում են նաև ղզլարահայեր Ս. Դիարովը, Ա. Ասլամազովը, Ս. Կոժանիկովը որպես մետաքսաթելի հմուտ մշակողներ[44]։

Մոզդոկում նույնպես մետաքսի մշակությամբ գերազանցապես զբաղվել են հայերը։ Մոզդոկի քաղաքային վարչության 1834 թ. տեղեկագրում հիշատակվում են 158 հայ մետաքսագործներ, այդ թվում՝ 11 կալվածատեր, 6 հոգևորական և 141 մոզդոկցի հայ տնատերեր, որոնք ընդհանուր քանակությամբ ունեին 10 043 թթենի և մշակում էին 8 փութ 62 ֆունտ մետաքս[45]։ Այդ նույն ժամանակ մոզդոկցի վրացիները (77 մետաքսագործ) մշակել են 3 փութ 27 ֆունտ, օսերը (8 մետաքսագործ)՝ 11 ֆունտ, իսկ չերքեզները (8 մետաքսագործ)՝ 12,5 ֆունտ մետաքս։ Ընդհանուր առմամբ, 1834 թ. Մոզդոկում հաշվվում էր 14 048 թթենի և մշակվում էր 14 փութ 2 ֆունտ մետաքս[46]։

Մոզդոկում մետաքսամշակման գործարանների առկայության մասին վավերագրերում տեղեկություններ չենք հանդիպում։ Մոզդոկահայերի հատուկ տնակներում մշակվող ոչ մեծ քանակությամբ մետաքսը հիմնականում սպառվել է տեղում և միայն աննշան քանակությամբ է արտահանվել։ XIX դարի կեսերից մետաքսամշակությունը երկրամասում անկում է ապրում։ Մետաքսամշակման գործարանների բացակայությունը (Ղզլարի մետաքսամշակման գործարանները դեռևս XVIII դարի վերջերին պետական վարկերը չվճարելու պատճառով պետականացվել էին)[47], սպառման շուկաների հեռավորությունը, ճանապարհների անհարմարությունը, մետաքսամշակության բավական աշխատատար պրոցեսը և ազատ աշխատուժի գրեթե մշտական պակասը, մետաքսամշակման արտադրանքի համար սահմանված ցածր գները որոշակիորեն դանդաղեցրել և սահմանափակել են մետաքսագործության զարգացման տեմպերը և հայ մետաքսաարտադրողների գործունեությունը երկրամասում։

Հատկանշական էր հայերի մասնակցությունը XVIII դարի հյուսիսկովկասյան առևտրում։ Հայ վերաբնակիչների համար արտոնյալ գոյավիճակի հաստատումը (այդ թվում՝ կաբարդական և կումիկական իրենց նախկին բնակավայրերը մեկնելու թույլտվությունը), ազատ և անմաքս առևտուրը նպատակ ունեին ոչ միայն բարելավել նորաբնակների տնտեսական վիճակը, այլև շահագրգռել և նպաստել նոր գաղթականների վերաբնակեցմանը[48]։ Առևտուրը, ռուսական իշխանությունների ծրագրով նպաստելու էր երկրամասում տնտեսական կյանքի աշխուժացմանը, ինչպես նաև խթան պիտի հանդիսանար կովկասյան լեռնցիներին նյութապես շահագրգռելու և ռուսական առևտրում ներգրավելու գործում։ Ղզլարի և Մոզդոկի պարետային գրասենյակների ընթացիկ գրառումների հաշվեմատյաններում և այլ փաստաթղթերում բազմիցս հանդիպում ենք հայ առևտրականների մասին հիշատակությունների։ Նրանք ազատ ու անվտանգ առևտրական երթևեկի նպատակով հատուկ անձնագիր էին ստանում, մեկնում Աստրախան, իսկ այնտեղից՝ Ռուսաստանի տարբեր քաղաքներ։ Այսպես՝ Ղզլարի հայ համայնքի ավագ Ս. Իվանովը 1772 թ. Ղզլարի պարետին.

---

43 Н. П. Гриценко. Указ. соч. с. 55; С. А. Чекменев. Указ. соч., с. 195.

44 ЦГА ДАССР, ф. 362, оп. 1, д. 54, лл. 4 об, 6 об—7.

45 Նույն տեղում, գ. 24, թ. 4—5։

46 Նույն տեղում, թ. 2—8։

47 ПСЗРИ, т. XXVI, № 19290.

48 АВПР, ф. Кизлярские и Моздокские дела, 1762—1763 гг., д. 1, лл. 133—134 об., 147—156 об.

ուղղված զեկուցագրում հիշատակվում է ղզլարցի հայ Ա. Մանուչարովը, որը առևտրական նպատակով Աստրախան մեկնելու համար անձնագիր (նաև անցաթուղթ) է խնդրում։ XVIII դարի երկրորդ կեսի այլ վավերագրերում հիշատակվում են ղզլարցի հայեր Ա. Մանվելովը, Ստ. Սուլթանովը, Խաչիկովը, Ս. Իսաևը, Ց. Կարպովը և ուրիշներ, որոնք հայ համայնքի ավագի միջնորդությամբ Ղզլարի պարետից անձնագիր էին ստանում Աստրախան, Անդրկովկաս և ռուսական տարբեր տոնավաճառներ մեկնելու համար[49]։ Հայերը Ռուսաստանի և Անդրկովկասի շուկաներում վաճառքի էին հանում հիմնականում սեփական երկրագործական արտադրանքը։ Փոխարենը, Աստրախանում, Մակարևյան, հետագայում Նիժնի Նովգորոդյան տոնավաճառներում հայ առևտրականները գնում էին մետաքս. բամբակե, մահուդե, կտավե գործվածքներ, երկաթե և այլ մանր ապրանքներ, որոնց սպառումն արդեն կատարվում էր Ղզլարում, Մոզդոկում, կոզակային ստանիցաներում, կովկասյան գծի ռուսական բնակավայրերում և այլուր[50]։ Ապրանքների մի մասն էլ վաճառվում էր Կովկասյան լեռներից և այլ բնակավայրերից Ղզլար և Մոզդոկ ժամանած լեռնցի, այդ թվում և հայ միջնորդ առևտրականներին[51]։ Միաժամանակ Մոզդոկի պարետային գրասենյակի 1776 թ. տեղեկագրերում հանդիպում ենք ղզլարցի և մոզդոկցի հայ առևտրականների։ Նրանք Մեծ և Փոքր Կաբարդա վաճառքի են հանել Ղզլարում և Մոզդոկում գնված մի շարք ապրանքներ, հիմնականում սպիտակ կտավ, բյազ, բամբակե գործվածքներ, արծաթ, աղ և այլն, որոնց կարիքը մեծ չափով զգացվել է Կաբարդայում[52]։ Վավերագրերի և բազմաթիվ այլ աղբյուրների վկայությամբ, կովկասյան տեղաբնիկների հետ կատարվող առևտուրը կենտրոնացած էր հիմնականում ղզլարահայ և մոզդոկահայ առևտրականների ձեռքում։ Կովկասյան մի շարք լեզուների և տեղաբնիկների սովորույթներին քաջատեղյակ հայերը, կումիկների և կաբարդացիների շրջանում ապրող հայրենակիցների միջնորդությամբ, երկուստեք շահավետ առևտուր են ծավալել ոչ միայն Կաբարդայում, Թարքուում, այլև կումիկական էնդերի (Անդրեևո), Բրագուն և Կոստեկ գյուղերում[53]։ XVIII դարում Ղզլարում և Մոզդոկում տոնավաճառներ չեն եղել։ Մշտական առևտուր ապահովելու նպատակով XVIII դարի վերջերին Ղզլարում գործել են երեք առևտրական շուկաները (առևտրական քարվանսարաներ)՝ ռուսական, հայկական և թաթարական[54]։ Բազմաթիվ աղբյուրների վկայությամբ, XVIII—XIX դդ. երկրամասում իրականացվող մեծածախ և մանրածախ առևտրի մենաշնորհը հայերի ձեռքին էր։ 1785 թ. տվյալներով, Ղզլարի 169, Մոզդոկի 120 եռաշարք կրպակներում պարսիկ, վրացի և հիմնականում հայ վաճառականները ամբողջ տարին առևտուր էին անում։ Նրանք տեղական և ներմուծված գյուղատնտեսական, արհեստավորական և արդյունաբերական ապրանքներով բավարարում էին տեղի բնակչության պահանջները[55]։ XIX դարի սկզբներից մշտական առևտրի հետագա ծավալումը՝ կրպակների, խանութների, այլ առևտրական հաստատությունների ավելացումը Ղզլարում, Մոզդոկում և երկրամասի այլ քաղաքներում ու գյուղերում, ներքին շուկայի զարգացման և կապիտալիստական նոր արտադրահարաբերությունների ձևավորման պերճախոս վկաներն էին։ Առևտրական պահեստային կենտրոնի դեր ստանձնած Ղզլարը մեծ քանակությամբ ապրանքներ էր ներմուծում նաև Իրանից (Դերբենդի վրայով) և Կովկասի լեռնային շրջաններից, այդ թվում՝ հում մետաքս, մետաքսե և բամբակե գործվածքներ, տորոն, տարբեր մորթիներ, փայտե իրեր, թաց և չոր մրգեր, ընկույզ, բրինձ, փայտե գոր-

---

49 ЦГА ДАССР, ф. 379. оп. 1, д. 880, л. 94; д. 963. лл. 22. 24, 91, 95.

50 ЦГВИА СССР, ф. ВУА, д. 18570, ч. 1, л. 84.

51 Նույն տեղում, թ. 84, տե՛ս ЦГИА ГрузССР, ф. 1007, оп. 1, д. 47, л. 225.

52 ЦГА ДАССР, ф. 379, оп. 1, д. 1055, лл. 43—48.

53 АВПР, ф. Кизлярские и Моздокские дела, д. 1, л. 156 об.; И. Равинский. Указ. соч., с. 446—447.

54 Նույն տեղում։

55 ЦГВИА СССР, ф. ВУА, д. 18570, лл. 82 об., 99.

ծիքներ և այլն։ Այդ ապրանքները հիմնականում փոխադրվում էին Աստրախան կամ էլ վաճառվում Ղզլարում՝ Մոսկվայից եկած վաճառականներին[56]։ Մոզդոկում, հատկապես XVIII դարի վերջերին, Ռուսաստանից ստացվող ապրանքների հետ մեկտեղ տարբեր ապրանքներ էին ներմուծվում Վրաստանից (տարեկան մոտ 10000 ռ. արժողությամբ)[57]։ Այդ առևտուրը, չնչին բացառությամբ, կենտրոնացված էր Թերեքի շրջանում և Վրաստանում բնակվող հայերի և վրացիների ձեռքին։

XIX դարի առաջին կեսին ևս Ղզլարը և Մոզդոկը շարունակել են կարևոր դեր խաղալ թե՛ ներքին և թե՛ Կովկասը Ռուսաստանի հետ կապող տրանզիտային առևտրում։ Դարասկզբին լայն տարածում է ստանում երկրամասի նախաոեֆորմյան շրջանին բնորոշ և ներքին փոխանակումը ապահովող տոնավաճառային առևտուրը։ Մի շարք նոր տոնավաճառներ են հիմնվում երկրամասի քաղաքներում, ստանիցաներում, գյուղերում, այդ թվում՝ Ղզլարում և Մոզդոկում։ Ղզլարի հայկական դատարանը 1823 թ. ապրիլին Ղզլարի պարետ և շրջանի պետ Ի. Ֆեպինին է ներկայացնում տեղում տոնավաճառներ (տարին 2 անգամ) և կիրակնօրյա շուկա բանալու վերաբերյալ Ղզլարի հայկական, վրացական և թաթարական համայնքների համախոսականը[58]։ Վավերագրին կից ներկայացվող տեղեկագրում հիշատակվում են Ղզլարում կենտրոնացված տեղական և տարբեր վայրերից վաճառքի բերված 57 տեսակի զանազան ապրանքներ, այդ թվում՝ խաղողի օղի, գինիներ, տեղական և իրանական մետաքս, բրինձ, տորոն, տարբեր մրգեր, անասուններ, մորթիներ, կաշի, ձկնեղեն, ադիգեյական և կուբաչինյան զենքեր, գորգեր և այլն։ Տեղեկագրում նշվում են նաև տեղում վաճառքի համար ներմուծված 11 տարբեր ապրանքներ՝ մետաքսե և բամբակի կտորներ, արծաթե և ոսկե իրեր, կահույք, հախճապակյա ամաններ, ճենապակի, շաքար, թեյ, շոկոլադ և այլն[59]։ Տարատեսակ ապրանքների հիշատակումը վավերագրում վկայում է, որ Ղզլարը XIX դարի կեսերին ոչ միայն առևտրական ծավալուն կապեր ուներ երկրամասում և նրա սահմաններից դուրս, այլև տարանցիկ առևտրի հանգուցային կետերից մեկը հանդիսանալով, միաժամանակ ապահովում էր ներքին, տեղական շուկան գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքներով։ Ղզլարում, Մոզդոկում և այլ վայրերում տոնավաճառների հիմնումը և նրանցում ապրանքաշրջանառության մշտական և անընդհատ աճը ցայտուն ապացույցներն էին երկրամասում շուկայական աշխույժ կապերի հաստատման և հետագա ընդլայնման։ XIX դարի 30-ական թթ. Ղզլարի կապիտալ ունեցող 11 հայ վաճառականներից բացի, որոնք առևտուր էին անում Ռուսաստանի առևտրաշատ քաղաքներում, հայ առևտրականների մեծամասնությունը զբաղված էր տեղում ռուսական և արտասահմանյան ապրանքների առևտրով։ Նրանք տարեկան շուրջ 60 հազար ռուբլու առևտուր էին անում։ Մոզդոկի հայ վաճառականները ներմուծված ապրանքների մոտ 52000 ռուբլու և 1500 ռուբլու մանրապրանքային առևտուր էին անում[60]։ XIX դարի կեսերին, Մոզդոկը ոչ միայն հացահատիկային կուլտուրաների շահավետ առևտուր ուներ ռուսական քաղաքների հետ, այլև անասնավաճառության կենտրոն էր։ Լեռնցիները, Թերեքի շրջանում քոչվոր կյանք վարող նողայները, որոնց գլխավոր զբաղմունքը անասնապահությունն էր, մեծ թվով անասուններ էին քշում Մոզդոկ և վաճառում։ Առևտուրը քաղաքին տարեկան տալիս էր մոտ կես միլիոն ռուբլու եկամուտ։ Դա հետևանք էր այն բանի, որ թե՛ լեռնցիները և թե՛ նողայները, սովորաբար, ձեռք բերած գումարով տեղում գնում էին մանուֆակտուրային ապրանքներ, թեյ և այլն[61]։

---

56 Նույն տեղում, թ. 84։

57 Նույն տեղում, թ. 99։

58 ЦГА ДАССР, ф. 379, оп. 3, д. 421, лл. 4—5.

59 Նույն տեղում, թ. 7—8։

60 ЦГИА ГрузССР, ф. 2, оп. 1, д. 1047, лл. 161, 162.

61 «Արձագանք», 1895, № 151, էջ 3։

Ընդհուպ մինչև XIX դարի կեսերը, առևարը մանրապրանքային ու մանրածախ բնույթը, երկրամասում առևտրական հարմար ճանապարհների բացակայությունը և քաղաքական անապահով վիճակը ինչ-որ չափով կանխորոշում է սահմանափակում էին Արևելյան Կովկասում իրականացվող առևտրի չափերն ու ծավալը։ Ամուսնանալով, ժամանակի պահանջներից բխող, քաղաքական և տնտեսական որոշակի նպատակներ հետապնդող հյուսիսկովկասյան առևտուրը կարևոր է անցումային էտապ էր երկրամասի և նրա ժողովուրդների սոցիալ-տնտեսական կյանքում։

Այսպիսով, մի շարք արտոնություններից օգտվող Ղզլարի, Մոզդոկի և մյուս հայկական գաղթօջախները նշանակալի ներդրում են ունեցել Արևելյան Կովկասի բնակեցման և անտեսական յուրացման· առևտրի զարգացման և ծավալման գործում։

Ի տարբերություն գրեթե նույն ժամանակաշրջանում հիմնադրված գերմանական, շոտլանդական և օտարերկրյա մյուս ինքնապարփակ և առանձնացված համայնքների (որոնք նույնպես արտոնյալ համայնքներ էին և կոչված էին նպաստել երկրամասի տնտեսական յուրացմանը), հայ հատվածները ռուս գրսեկ բնակչության, գոզանության և աեղաբնիկների հետ մշտական շրփումների է կապերի շնորհիվ արտագրատնտեսական և առևարական լայն գործունեություն ծավալեցին երկրամասում և նրա սահմաններից դուրս։ Մայր հայրենիքի և ռուսահայ մյուս գաղթավայրերի հետ կենդանի կապերի, ռուս բնակչության հետ բազմապիսի և բաղմարնույթ առնչությունների և փոխազդեցության հետևանքով հայ համայնքները հնարավորություն ստացան լավագույն ձևով օգտագործել տնտեսվարության ժամանակի առաջադիմական մեթոդներն ու եղանակները։

ИЗ ИСТОРИИ ТОРГОВО-ЭКОНОМИЧЕСКОЙ ЖИЗНИ АРМЯНСКИХ ПОСЕЛЕНИЙ СЕВЕРНОГО КАВКАЗА

(Кизляр, Моздок; XVIII—первая половина XIX вв.)

Л. А. ПОГОСЯН

Резюме

Переселение армян в район Прикаспия и бассейн р. Терек в 20-х годах XVIII в. было связано не только со сложной политической ситуацией на их родине, но и с определенными интересами России в этом регионе. Армянское население Дербента, Св. Креста, Кизляра, Моздока, пользовавшееся некоторыми привилегиями, должно было способствовать интенсивному экономическому освоению края, развитию торговли. Находясь в постоянном тесном общении с русским и местными кавказскими народами, армяне развернули обширную торгово-экономическую деятельность не только в самом крае, но и за его пределами. Особенно значителен был вклад армянских поселенцев в развитие земледелия, виноградарства, зяноделия, шелководства. Покровительственная политика России, благоприятные природно-климатические условия, предприимчивость, опыт и трудолюбие армян обусловили благосостояние и перспективы развития армянских поселений и всего края.